


47199





ԶԵԿՈՒՑՈՒՄՆ

ԹԻՖԼԻԶԻ ՀԱՅ ԳԻՒՂԱՑՆՑԵՍԱԿԱՆ ԵԽ ՏՆԱՅԻՆ ԱԳՈՐԾԱԿԱՆ Բ.-ԵԱՆ
1913 ԹԻՄԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ

Թողնելով Բ.-Եանս 1411—12 թւականների գործունէութեան մանրա-
մասն հաշետութիւնը առաջիկայ տարու մօտագայ ընդհանուր ժողովներից
մէկին, մինչև որ վերջնականապէս ժողովւած կլինեն անհրաժեշտ նիւթեր,
վարչութիւնս իր պարտքն է համարում ներկայ ընդհանուր ժողովին և հայ
հասարակութեան լայն խաւերին ծանօթացնել այն գործունէութեան հետ, որ
նա ունեցել է այս 1913 թւականին թէ տեղումս՝ Թիֆլիզում և թէ նրանից
դուրս գաւառում՝ մեծ մասամբ մեր գլուղական շրջաններում:

Ե/Դ/Ձ

I Վարչական ԵԽ ընդհանուր ժողովներ:

Վարչական ժողովներ: 1913 թւականին, ինչպէս և նախորդ տարինե-
րում, Բ.-Եան գործադիր մարմինը՝ վարչութիւնը յանձին նախագահի և վար-
չութեան եօթ անդամների ունեցել է իւրաքանչիւր շաբաթ վարչական նիս-
տեր, որոնց մէջքննութեան են առնւել Բ.-Եան վարչական գործերը, զա-
նազան անձերից և հաստատութիւններից նրան արւած գիմումները, որպէս
նաև ընդհանուր ժողովների նիւթ գարձող մի շարք խնդիրներ, գեկուցումներ
և առաջարկներ:

Տարւայ ընթացքում այդպիսի վարչական նիստեր եղել են 28, իսկ ա-
մառները, չնորիւ այն հանդամանքի, որ վարչութեան անդամներից շատերը
բացակայել են բաղաքիցս, վարչական գործերը տարել են Բ.-Եան նախագահը
քարտուղարի հետ, համաձայն վարչութեան նախապէս արած որոշման, այն
պայմանով, որ սեպտեմբերին վարչութեանը հաշիւ արւի արածի մասին:

Շնորհիւ այն հանդամանքի, որ Բ.-Եանս նախագահը և փոխ նախագահը
իրանց պաշտօնական և ծառայական գործերով երբեմն բացակայել են Թիֆ-
լիզից, վարչական ժողովները կայացել են որոշ ընդմիջումներով, և որպէսզի
դրանից չվասարի Բ.-Եան գործունէութիւնը ընդհանուր ժողովի հաւանու-
թեամբ փոփոխութեան է ներկայացւած կանոնադրութեան այդ կէտը հետե-

եալ խմբագրութեամբ, «նախագահի կամ նրա օդնականի բացակայութեան ժամանակ վարչական և ընդհանուր ժողովները տեղի են ունենում վարչութեան այն անդամի նախագահութեամբ, որը բնարութիւնների ժամանակ ստացել է ձայների մեծամասնութիւն»: Բացի դա նոյն ընդհանուր ժողովի որոշմամբ փոփոխութեան է ենթարկելում կանոնադրութեան այն յօդւածը, որով որոշում է տարեկան անդամավճարը երեք բուրլուց առաջիկայում դարձնել մի բուրլի՝ յատկապէս գիւղացի անդամների վերաբերմամբ:

Ընդհանուր ժողովներ—ը-եանս գործունէութեան մէջ ընդհանուր ժողովները միշտ ել կատարել են որոշ գեր, դրանց ընթացքում մի շարք գեկուցումների մէջ, որ կարդացել են ը-եան թէ մասնագէտ անդամները և թէ դրանց հրաւիրւած անձինք, շօշափւել են մեր երկրի տնտեսական և գիւղատնտեսութեանը վերաբերեալ մի շարք շատ կարևոր խնդիրներ, որոնք և հիմք են ծառայել ը-եանս կառավարութեան և պետական հաստատութիւնների առաջ յարուցած դիմումներին, միջնորդութիւններին: Այդպիսի գեկուցումների թիւը 1913 թւին եղել է վեց 1) Մայրենի լեզւի գերը գիւղատնտեսական ստորին դպրոցներում 2) Ինստրուկտորական գործունէութեան կազմակերպումը 3) Մեր երկրի ոչխարաբուժական կարիքները 4) Մեր երկրի արդիւնաբերութիւնը և սառուցման գործի կազմակերպութիւնը. 5) Սակաւահողութիւնը և նրա հետևանքները: 6) Բորչալուի շրջանի գիւղատնտեսական կարիքները:

Այս ժողովները գրաւել են բացի ը-եանս անդամներից, նաև այն գիւղացիներին, որոնք քաղաք գալով ներկայ են եղել այդ ժողովներին և մասնակցել են ը-եանս շօշափած հարցերին իրանց լուսաբանութիւններով:

II Հրահանգչական (ինստրուկտորական) գործունէութիւն.

Վարչութիւնը այս տարի առանձին նշանակութիւն է տւել հրահանգչական գործունէութեան կազմակերպութեանը գաւառներում, մանաւանդ գարնան և ամառային ամիսներում, երբ երկրագործ ժողովուրդը բնականապէս մեծ կարիք է զգում գործնական ցուցմունքների և կենդանի օրինակի: Այդ նպակով ահա նա հրաւիրել է երկու հրահանգիչներ՝ ստորին կրթութեամբ, որոնցից մէկին նշանակել է Բորչալուի և Ղաղախի շրջանների 11 գիւղախմբում գործելու, նաև ուսումնասիրելու Մեծ-Ղարաքիլսայի և նրա շրջակայքի այգեգործական և բանջարաբուժական պայմանները, իսկ միւս հրահանգին ուղարկել է Ալեքսանդրապոլ և Շիրակի հայարնակ գիւղեր մի շարք ուսումնասիրութիւնների համար որոշ հրահանգներով:

Սրանցից առաջինը պ. Ա. Քարտաշեան՝ ունենալով իր հետ բուժիչ գեր և գործիքներ, տարիից շրջել է Բորչալուի և Ղաղախի գիւղերը, ցուցմունքներ է տւել խաղողի և պտղատու այգիների բժշկութեան, խնամքի, բանջարաբուժական պարապմունքների մասին, բաժանել է այգետէրերին բու-

ժիչ գեղեր, ապարատներ, ցուցադրել է բուժման գործը և, վեց ամիս շարունակ, որոշ հաշանգներ ստանալով վարչութիւնից, շրջել է մի գիւղից միւսը, կատարելով իր ստանձնած պաշտօնը, միաժամանակ նա ներկայացրել է մի զեկուցում Ղարաքիլսայի այգիների և բանջարանոցների մասին:

Երկրորդ ինստրուկտոր այգեգործ պ. Զաքար Խաչատրեանը հսկել է Ալեքսանդրապոլի և Փրկչի դպրոցին կից եղած ցուցական բանջարանոցին և ապա, շրջելով Շիրակ պ. պ. Խիլանեանցի, Սաւելկի և Տրիանդաֆիլոսի հետ ուսումնասիրել է շրջանի հողային և մասնաւորապէս բանջարաբուժական պայմանները, որոնք վերջերս ցոյց են տալիս առաջադիմութեան ձգտում: Այդ մասնակայի մէջ, որ կարդացել են ը-եան թէ մասնագէտ անդամները և թէ դրանց հրաւիրւած անձինք, շօշափւել են մեր երկրի տնտեսական և գիւղատնտեսութեանը վերաբերեալ մի շարք շատ կարևոր խնդիրներ, որով կարդացւել է Ալեքսանդրապոլում բացւած ցուցահանդիսի Համագումարում:

III Մեր երկրում գործածական գիւղատնտեսական մնաքնաների և գործիքների ուսումնասիրով թիւնը:

Աչքի առաջ ունենալով այն ահագին գերը, որ ունեն գիւղատնտեսական մեքնաներն ու գործիքները մեր երկրի գիւղատնտեսական կեանքում, նաև այն, որ մինչև օրս մեզնում չկայ մի մասնագիտական ուսումնասիրութիւն, նւիրւած յատկապէս այդ գործին, ը-իւնս, համաձայնութեան մէջ մանելով Կովկասեան Կայսերական Գիւղատնտեսական և Տնայնագործական կոմիտետի հետ, հրաւիրեց և յանձնարարեց այդ հաստատութիւնների տրամադրութեան տակ ուղարկւած մեքնայագիտութեան մասնագիտներ պ. պ. իւանովին և Թեօդրովին շրջել Անդրկովկասի շրջաններ՝ կատարելու մանրամասն և գիւղատնտեսասիրութիւն՝ պարզելու համար ա) այն գործիքներն և մեքնաները, որ տարածւած են մեր ժողովրդի մէջ և բ) այն մեքնաներն ու գործիքները, որոնք ցանկալի և յարմար են արածումն գտնելու երկրագործագործնակութեան միջնորդ: Եւ ահա այդ անձանց կտարած երեսնի, Թիֆլիզի և Գանձանգներում պարզեցին մի շարք շատ կարևոր խնդիրներ, որոնք քննութեան նիւթ են գառնալու առաջիկայ 1914 թւին մեր և Թիֆլիզում գոյութիւն ունեցող գիւղատնտեսական այլ ը-իւնների միացեալ խորհրդակցութիւնների ժամանակ:

VI Գիւղատնտեսական Ամառային Դասընթացքներ:

Ը-թիւնս, ինչպէս և նախորդ տարիներում, այս տարի ևս ամառայ 2 ամիսներում կազմակերպել է Ալեքսանդրապոլում որպէս հայ ազգաբնակութեան ամենակարիքաւոր շրջանում, Գիւղատնտեսական Դասընթացքներ մեծ մասամբ գիւղական ուսուցիչների, դպրոցաւարտ սաների համար: Դասընթացքներին աւանդուել են կաթնատնտեսութիւն, անասնապահութիւն, բանջարաբուժութիւն, երկրագործութիւն, թոչնաբուժութիւն և մեղւաբուժութիւն, որոնցից

առաջինը գործնական պարապմունքներով, իսկ միւսները՝ ցուցադրումներով և էքսկուրսիաններով։ Դասընթացքների ղեկավարը եղել է պ. Ա. Դիլանեան, դասախոսել են Ա. Քալանթար, Ա. Աթանասեան, Յ. Միրզայեան, Վեհապետեան, Մ. Նաւասարդեան, Փիրումեան և ուրիշները։ Դասընթացքները ունեցել է անհրաժեշտ ինվենտար, քարտէզներ, ցուցադրական նկարներ, կոլեքցիաններ և այլն։

V. Ալեքսանդրապոլի Ռայոնական Ցուցահանդեսը։

Ըսկերութիւնս այս տարի ջերմ և անմիջական մասնակցութիւն է ունեցել յուլիս ամսին Ալեքսանդրապոլում կովկ. Գիւղատնտես. Ը-եան ձեռներէցութեամբ կազմակերպած երրորդ բայոնական գիւղատնտեսական և արհեստների ցուցահանդիսի իրագործման գործի մէջ, որի նախաձեռնողն էր Ը-եանս նախագահ Ա. Քարանթար։ Ցուցահանդիսում առանձին հոգատարութեամբ Ը-իւնս կազմակերպել է մասնաւորապէս արհեստաւորների և տնայնագրործների արդիւնքների ցուցադրութեան գործը և սրա հարուստ քաժինը։ Միաժամանակ Ը-եանս կողմից ցուցահանդիսի համագումարին ներկայացւել են մի շարք գեկուցումներ, որոնք պարզել են գաւառի գիւղատնտեսական մի շարք կարեներ։ Այդ ցուցահանդիսին մասնակցել է Ը-եանս Ամառային Դասընթացքների կազմակերպութիւնը, իսկ մեր տնայնագրործական գործւածքները, արժանացել են ամենաբարձր պարզել՝ ոսկէ մեղալի։

VI. Գութանների ցուցադրումը և վարչ։

Օգուստով Ալեքսանդրապոլի ցուցահանդէսից, Ը-իւնս կազմակերպեց յուլիս 23—24-ին քաղաքային հողերի վրայ թէ տեղական և թէ եւրոպական և մեր երկրում գործառութեան մէջ գտնւած գութանների մի հարուստ ժողովածու։ Ղեկավարութեամբ մասնագէտ ինստրուկտորների կատարւեցին դրանցից խւրաքանչխւրի վարը, եղան համեմատական զննութիւններ և լուսանկարում։ Ը-իւնս կողմից մասնակցում էին Յ. Փիրալեան և Ա. Աթանասեան։ Ցուցադրումը առաջ բերեց գիւղացիների և տեղական արհեստաւորների կողմից մեծ հետաքրքրութիւն։ Դրա արդիւնքների մասին կզեկուցւեն առանձին, երբ մասնագէտները կներկայացնեն իրենց եզրակացութիւնները։

VII. Ը-եան մասնակցութիւնը Ցուցահանդէսներին և Համագումարներին։

Բացի վերև յիշած ցուցահանդիսից, Ը-իւնս մասնակցել է նաև այս հոկտ. 15—20-ը թիվովում կայացած Պաղարուծական ցուցահանդիսին, որի

համար նա հարուստ էքսպոնատներ էր ժողովել իր ինստրուկտորների միջոցով թէ Բորչալուի և թէ Ալեքսանդրապոլի գանապոններից—այն է՝ պատուղներ, խաղող, բանջարներ, սերմեր և այլն։ Դրա համար Ը-եանս ինստրուկտորները ստացան ժիւրիի կողմից գովասանական վկայականներ։

Բացի դա Ը-իւնս յանձին իր ներկայացուցիչների մասնակցել է Մոսկայի Կօօպերատիւ Համագումարին, Մոսկայի ոչխարաբուծական ցուցահանդիսին, Թիֆլիսի վազաբուծական և գինեգործական նահանգական կոմիտետին, Սարցարանական Համագումարի նախապատրաստական աշխատանքներին և իրեն Համագումարին, Թիֆլիսի նահանգի գեմնելիյ նախահաշուի 1914—1917 թւականների ընսութեան ագրոնոմիական խորհրդակցութեանը, անցկացնելով այդ եռամբեակի համար 15,445 բուրդու իր խնդրած նպաստ ընդունելով առաջարկը։

VIII. Հրանտարակական գործ։

Ը-իւնս ի նկատի առնելով «Գիւղատնտես» երկարաթաթերթի կատարած կարեւոր գերբ գիւղատնտեսական գիտութիւններ ժողովրդականացնելու գործում, այս մարդի ևս նպաստել է նրան տարեկան 150 բուրդիով։ բացի դա ձեռք է բերել մի շարք ձեռնարկներ գիւղատնտեսական բովանդակութեամբ, որոնք և հրատարակելու են առաջիկայ 1914 թւականին։ Միաժամանակ վարչութիւնը ընդունած զնալով ընդհանուր ժողովներում քանիցս արտայայտւած միահամուռ ցանկութեան, որոշել է առաջիկայ 1914 թւականից «Գիւղատնտես»-ը դարձնել իր օրգան և հրատարակութիւն, կազմելով մի յատուկ խըմբագրական մարմին Ը-եանս մասնագէտ անդամներից—ղեկավարութեամբ Ը-եանս քարտուղարի։

IX. Ժամհարեան գիւղատնտեսական դպրոց։

Աչքի առաջ ունենալով այն մեծ դերը, որ ունենալու է ապագայում ժամհարեան գիւղատնտեսական անդրանիկ դպրոցը, Ըսկերութիւնս մասնակցել է դպրոցի հոգաբարձական մարմնի ընտրութեանը և վարչութեան միջից ընտրել է երեք հոգի, որպէս հոգաբարձութեան անդամներ, այն է Ա. Քալանթարին, Յ. Փիրալեանին և Ա. Աթանասեանին։ միաժամանակ մի շարք քայլեր է արել եղբ. ժամհարեանների առաջ, փոփոխելու դպրոցական ծրագիրը այն մտքով, որ դասաւանդութեան լեզուն դպրոցում լինի մայրենի հայերէնը, և յուսով է, որ այդ բանը կյաջողւի նրան։

X. Գիւղատնտեսական թիւրօ։

Դեռ ևս 1911 թւից Ը-իւնս ունեցել է մի յատուկ Խորհրդատու Բիւրօ, որին դիմել են մեր երկրի զանազան մասերից թէ անհատներ և այսա-

տութիւններ մի շարք գործնական խորհուրդների համար այն է՝ բերել տալ գործիքներ, մեքենաներ, բուժիչ միջոցներ, տալ նրանց ցուցմունքներ կօպերատիւ և վարկային հաստատութիւններ կազմակերպելու համար և այն:

Բիւրօն՝ յանձին Ը-եանս քարտուղարի և վարչութեանս միւս անդամների, տարւայ մէջ աւելի քան 150 դրաւոր պատասխաններ է տւել իրեն դիմոդներին, չհաշւած այն բազմաթիւ դիմումները, որ լինում են քաղաքում Ը-եան գրասենեակում:

VI Ը-եան նախագահ եւ հիմնադիր Ա. Քալանջարի մահը:

Այս տարում հոկտեմբեր 21-ին Ծնկերութիւնս ունեցել է մի ծանր և անփոխարինելի կորուստ յանձին Ը-եան հիմնադիր և նախագահ Ալեքսանդր Քալանջարի: Ը-իւնս ցանկանալով յաւերժացնել նրա յիշատակը մի շօշափելի և մնայուն գործով, հիմնել է Քալանջարեան ֆոնդ, որի նպատակները և իրագործման եղանակները դեռ ևս դանւում են մշակութրան շրջանում:

Ծնկերութեան վերջունութիւն

ԱՆ Հայագիրական գրադարան



MAL014930

